ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 14.05.2019թ. ԹԻՎ 347-Ա ՀՐԱՄԱՆՈՎ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ 1 հուլիսի 2019թ.,
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33) ժամը 11:30

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝

Գ. Սիմոնյան ՏԱ տնօրեն

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝

Ս. Բաղդասարյան ՕԵԿզ ՀԿ ծառայության պետ

Վ.Ասրյան ՕԵԿ տեխնիկական կենտրոնի ղեկավար

Հանձնաժողովի բացող անդամներ՝

Ա. Օհանյան <<Աշտարակ>> ՏԿ ղեկավար

Ա.Սահակյան ՕԵԿ կենտրոնի ավագ ինժեներ

Հանձնաժողովի քարտուղար

Գ. Սարգսյան ԻՊԳ բաժնի մասնագետ

Օրակարգ՝

1. <<ՀԱՆ-ԲՄԱՊՁԲ-01/19>> ծածկագրով Օդանավակայանի հաղորդակցման համակարգի՝ ՕԵԿ պահուստային սրահի ձայնային կապի համակարգի ձեռքբերման և տեղադրման նպատակով իրականացվող գնման ընթացակարգի հայտերի բացում

Գ. Սարգսյանը տեղեկացրեց, որ գնումն իրականացվել է էլեկտրոնային գնումների Armeps (www. armeps.am) համակարգի միջոցով:

Հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկայի համար սահմանված նախահաշվային գինը՝ 157 000 000 ՀՀ դրամ:

Արձանագրվեց, որ <<ՀԱՆ-ԲՄԱՊՁԲ-01/19>> ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ էր ներկայացրել <<S.I.T.T.I>> S.p.A հասցե՝ Իտալիայի Հանրապետություն :

Հրապարակվեց <<S.I.T.T.I>> S.p.A գնային առաջարկը՝ 201050 եվրո: Հիմք ընդունելով <<ՀԱՆ-ԲՄԱՊՁԲ-01/19>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.5 կետը, ամրագրվեց մասնակցի գնային առաջարկը՝ 109 208 350 ՀՀ դրամ, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի սահմանած 1 եվրոն 543.19 ՀՀ դրամ փոխարժեքի (կից ներկայացվում է ՀՀ կենտրոնական բանկի կայքից կատարված քաղվածքը):

Հանձնաժողովը քննարկման արդյունքում ***միաձայն որոշեց.***

1. Ընկերության կարիքների համար <<ՀԱՆ-ԲՄԱՊՁԲ-01/19>> ծածկագրով Օդանավակայանի հաղորդակցման համակարգի՝ ՕԵԿ պահուստային սրահի ձայնային կապի համակարգի ձեռքբերուման և տեղադրման նպատակով իրականացվող գնման ընթացակարգի մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<S.I.T.T.I>> S.p.A-ին,

2. Հանձնարարել հանձնաժողովի քարտուղարին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել <<ՀԱՆ-ԲՄԱՊՁԲ-01/19>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումը,

3. Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովին ներկայացնել <<ՀԱՆ-ԲՄԱՊՁԲ-01/19>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

4.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.2 և 8.17 կետերի համաձայն՝ <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲ ընկերությունում:

Գ. Սիմոնյան	Հանձնաժողովի նախագահ
Ս. Բաղդասարյան	Հանձնաժողովի անդամ
Վ.Ասրյան	Հանձնաժողովի անդամ
Ա. Օհանյան	Հանձնաժողովի անդամ
Ա.Սահակյան	Հանձնաժողովի անդամ
Գ. Սարգսյան	Հանձնաժողովի քարտուղար